ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ № 1
№ ԳՀԱՊՁԲ-22-9/47-13 ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԻ

ք. Երևան 21.11.2022թ.

ՀՀ պաշտպանության նախարարությունը, ի դեմս ՀՀ պաշտպանության նախարարի տեղակալ՝ Կ. Բրուտյանի, ով գործում է նախարարության կանոնադրության հիման վրա՝ այսուհետև «Գնորդ», մի կողմից և «Արֆարմացիա» ՓԲԸ-ն, ի դեմս գլխավոր տնօրեն Ա. Հովհաննիսյանի, ով գործում է «Արֆարմացիա» ՓԲ ընկերության կանոնադրության հիման վրա, մյուս կողմից, այսուհետև՝ «Վաճառող», երկուսը միասին՝ Կողմեր, հիմք ընդունելով 17.10.2022թ. կնքված № ԳՀԱՊՁԲ-22-9/47-13 գնման պայմանագրի (այսուհետև՝ Պայմանագիր) 8.1 կետը՝ փոխադարձ համաձայնությամբ կնքեցին սույն համաձայնագիրը (այսուհետև՝ Համաձայնագիր) հետևյալի մասին.

1. Համաձայնագրի առարկան

1.1 Կողմերը, հիմք ընդունելով համապատասխան ֆինանսական միջոցներ նախատեսվելու փաստը, փոխադարձ համաձայնությամբ որոշեցին կնքել սույն Համաձայնագիրը՝ սահմանելով ապրանքների գնման և վճարման ժամանակացույցեր՝ համաձայն Հավելվածներ № 1-ի և №2-ի:

1.2 Վաճառողը պարտավորվում է սույն Համաձայնագրով սահմանված կարգով, նախատեսված ծավալներով, ձևով և ժամկետներում Գնորդին կամ նրա կողմից որոշված ստացողին մատակարարել՝ Պայմանագրի տեխնիկական բնութագրերով նախատեսված ապրանքներ (այսուհետև՝ Ապրանք)՝ համաձայն № 1 Հավելվածով սահմանված գնման ժամանակացույցի, իսկ Գնորդը պարտավորվում է ընդունել այդ Ապրանքը և վճարել դրա համար՝ վճարման ժամանակացույցով՝ հավելված № 2-ով, նախատեսված ժամանակահատվածում:

2. Գինը և վճարման կարգը

2.1 Սույն Համաձայնագրի ընդհանուր գինը կազմում է 17 340 400 (տասնյոթ միլիոն երեք հարյուր քառասուն հազար չորս հարյուր) ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ-ն, որը ներառում է Համաձայնագրի կատարումն ապահովելու նպատակով կատարվելիք բոլոր վճարները (ծախսերը), այդ թվում՝ նաև հարկերը, տուրքերը և ՀՀ օրենսդրությամբ սահմանված այլ վճարները:

2.2 Գնորդն իրեն հանձնած Ապրանքի դիմաց վճարումը կատարում է Պայմանագրի 3.3 կետով նախատեսված կարգով, համապատասխան եռամսյակներում առկա միջոցների հաշվին, բայց ոչ ուշ, քան 15.12.2022թ.:

3. Այլ պայմաններ

3.1 Սույն Համաձայնագիրը հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մասը, ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև Կողմերի փոխադարձ պարտավորությունների լրիվ կատարումը:

3.2 Սույն Համաձայնագրում չնշված՝ գնման Պայմանագրով նախատեսված դրույթները, պայմանները, Կողմերի իրավունքները և պարտականությունները, Ապրանքի մատակարարման, հանձնման-ընդունման, Կողմերի պատասխանատվության հետ կապված և այլ հարաբերություններ թողնվում են անոխ:

3.3 Սույն Համաձայնագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

3.4 Սույն Համաձայնագրում ոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ նոր համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա սույն Համաձայնագրի անբաժանելի մասը:

3.5 Սույն Համաձայնագիրը կազմված է 2 էջից, հայերենով, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Սույն համաձայնագրի № 1 և №2 Հավելվածները հանդիսանում են սույն Համաձայնագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ:

3.6 Սույն Համաձայնագրով նախատեսված՝ ապրանքների ձեռքբերման պատասխանատու ստորաբաժանում է հանդիսանում ՀՀ ՊՆ ՆՏԱ գլխավոր վարչությունը, իսկ կառուցվածքային ստորաբաժանում՝ ՀՀ ԶՈՒ ռազմաբժշկական վարչությունը:

4. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

ԳՆՈՐԴ	ՎԱՃԱՌՈՂ
ՀՀ պաշտպանության նախարարություն	«Արֆարմացիա» ՓԲԸ
ՀՀ, ք. Երևան, Բագրևանդի 5	ՀՀ, ք. Երևան, 0064, Ռաֆֆու 111
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն	«Հայէկոնոմբանկ» ԲԲԸ
Հ/Հ 900011144129	Հ/Հ 163008100220
ՀՎՀՀ 02522157	ՀՎՀՀ 02505735
ՀՀ պաշտպանության նախարարի տեղակալ	գլխավոր տնօրեն
Կ. ԲՐՈՒՏՅԱՆ	Ա. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

Հավելված N 1
N ԳՀԱՊՁԲ-22-9/47-13 պայմանագրի
N 1 Համաձայնագրի

ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

Գնման առարկայի							
չ/h	CPV անվանումը	անվանումը	չ/մ	քանակը	միավորի գինը (ՀՀ դրամ)	ընդհանուր գումարը (ՀՀ դրամ)	Մատակարարումը 2022թ. չորրորդ եռամսյակ, բայց ոչ ուշ քան 12.12.2022թ.
12	մետրոնիդազոլ a01ab17, d06bx01, g01af01, j01xd01, p01ab01	մետրոնիդազոլ, metronidazole	հատ	10400	170.00	1 768 000	10400
17	նատրիումի քլորիդ a12ca01, b05cb01, b05xa03	նատրիումի քլորիդ, sodium chloride	հատ	64500	180.00	11 610 000	64500
45	դիկլոֆենակ d11ax18, m01ab05, m02aa15, s01bc03	դիկլոֆենակ (դիկլոֆենակ նատրիում), diclofenac (diclofenac sodium)	հատ	8000	75.30	602 400	8000
84	ֆենտանիլ n01ah01, n02ab03	ֆենտանիլ fentanyl	հատ	8000	420.00	3 360 000	8000
Ընդամենը						17 340 400	

Հավելված N 2
N ԳՀԱՊՁԲ-22-9/47-13 պայմանագրի
N 1 Համաձայնագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

Գնման առարկայի				
չ/h	CPV կոդը	CPV անվանումը	անվանումը	վճարումը նախատեսվում է իրականացնել 2022թ., չորրորդ եռամսյակ, բայց ոչ ուշ քան 15.12.2022թ.
12	33691112/1	մետրոնիդազոլ a01ab17, d06bx01, g01af01, j01xd01, p01ab01	մետրոնիդազոլ, metronidazole	1 768 000
17	33691136/2	նատրիումի քլորիդ a12ca01, b05cb01, b05xa03	նատրիումի քլորիդ, sodium chloride	11 610 000
45	33631310/2	դիկլոֆենակ d11ax18, m01ab05, m02aa15, s01bc03	դիկլոֆենակ (դիկլոֆենակ նատրիում), diclofenac (diclofenac sodium)	602 400
84	33661114/1	ֆենտանիլ n01ah01, n02ab03	ֆենտանիլ fentanyl	3 360 000
Ընդամենը				17 340 400

* Վճարման ենթակա գումարները ներկայացված են ամբողջական կարգով:

ԳՆՈՐԴ

ՀՀ պաշտպանության նախարարություն
ՀՀ պաշտպանության նախարարի տեղակալ

Կ. ԲՐՈՒՏՅԱՆ

ՎԱՃԱՌՈՂ

«Արֆարմացիա» ՓԲԸ գլխավոր տնօրեն

Ա. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ